

Համարը N 694-Ս

Տիպը Հրաման

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2003.02.03/3(121) Հոդ.29

Ընդունող մարմինը Կրթության և գիտության նախարար

Ստորագրող մարմինը Կրթության և գիտության նախարար

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.02.2003

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 23.12.2002

Ստորագրման ամսաթիվը 23.12.2002

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ-ՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության նախարարության կողմից

13 հունվարի 2003 թ.

Պետական գրանցման թիվ 11003007

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

23 դեկտեմբերի 2002 թ.

ք. Երևան

N 694-Ս

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. հուլիսի 20-ի N 662 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգ»-ի 7-րդ կետի պահանջներին համապատասխան

#### Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացման և դադարեցման փորձաքննության չափանիշները» համաձայն հավելվածի (կցվում է):

2. Նախարարության գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչությանը (պետ՝ Ա. Քոսյան)՝ սույն չափանիշները 3-օրյա ժամկետում գրանցման ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ պարոն Ա. Ավետիսյանին:

Նախարար՝

Լ. Մկրտչյան

«Հաստատում եմ»  
 ՀՀ կրթության և գիտության նախարար  
 \_\_\_\_\_ Լ. ՄԿՐՏՉՅԱՆ  
 \_\_\_\_\_ 2002 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունիսի 20-ի թիվ 662 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգ»-ի 7-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացման և դադարեցման փորձաքննության անցկացման նպատակով:

2. Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու նպատակով փորձաքննությունն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հանձնաժողովների կողմից, որոնք համապատասխանաբար ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի հրամաններով: Հանձնաժողովներում ընդգրկվում են նախարարության և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետև՝ բուհեր) և գիտական կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություններ) ներկայացուցիչներ:

3. Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու նպատակով փորձաքննությունն անցկացվում է հետևյալ չափանիշներով.

ա) բուհում կամ կազմակերպությունում ասպիրանտուրայի ձևով գիտական կադրերի պատրաստման համար յուրաքանչյուր մասնագիտությամբ առնվազն 1 գիտությունների դոկտորի (պրոֆեսորի) և (կամ) 2 գիտությունների թեկնածուների (դոցենտների) առկայություն, իսկ դոկտորանտուրայի ձևով գիտական կադրերի պատրաստման համար յուրաքանչյուր մասնագիտությամբ առնվազն 2 գիտությունների դոկտորների (պրոֆեսորների) և (կամ) 3 գիտությունների թեկնածուների (դոցենտների) առկայություն, որոնք տվյալ բուհի կամ կազմակերպության հիմնական աշխատողներ են: Այդ աշխատողները վերջին 5 տարում պետք է ունենան տվյալ մասնագիտությամբ առնվազն 3 հրատարակված գիտական աշխատություններ՝ գրախոսվող գիտական հրատարակություններում, որոնցից մեկը կարող է փոխարինվել միջազգային գիտական համաժողովների թեզիսներով.

բ) բուհի կամ կազմակերպության գիտական խորհրդում՝ կազմի 80% գիտական աստիճան ունեցող հիմնական աշխատողների, դրանցից 40% գիտությունների դոկտորների առկայություն.

գ) բուհում կամ կազմակերպությունում տվյալ մասնագիտության գծով գիտական կադրերի պատրաստման համար անհրաժեշտ գիտահետազոտական ու փորձարարական բազայի առկայություն:

4. Սահմանված չափանիշներով անցկացված փորձաքննության արդյունքներով հանձնաժողովը, անդամների առնվազն 2/3-րդի մասնակցությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, տալիս է եզրակացություն՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով ուսուցման կազմակերպման կամ դրանց դադարեցման մասին: Հանձնաժողովի եզրակացությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին: